

Մասնագիտության նկարագիրը	
Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	0416 Ատամնատեխնիկական գործ Ատամնատեխնիկ
I. Դերը	Բժշկի ցուցումով ատամնապրոթեզների՝ շարժական և անշարժ, օրթոդոնտիկ և դիմաձնոտային ապարատների պատրաստում, վերանորոգում և աշխատանք ատամնատեխնիկական սարքավորումների, գործիքների ու նյութերի հետ
II. Խնդիրների բնագավառները	<ol style="list-style-type: none"> 1. Աշխատատեղի նախապատրաստում և անհրաժեշտ աշխատանքային միջավայրի, միջոցների ապահովում 2. Անշարժ ատամնապրոթեզների պատրաստում և թերությունների շտկում 3. Շարժական ատամնապրոթեզների պատրաստում և վերանորոգում 4. Կլամերների կամ ատաչմենթային ֆիքսացիայի համակարգով բյուզելային պրոթեզների պատրաստում, թերությունների շտկում, վերանորոգում 5. Օրթոդոնտիկ ապարատների պատրաստում 6. Դիմաձնոտային պրոթեզների պատրաստում 7. Ձուլման գործ և զոդման տեխնիկա
<u>Խնդիրների բնագավառ 1. Աշխատատեղի նախապատրաստում և անհրաժեշտ աշխատանքային միջավայրի, միջոցների ապահովում</u>	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • Աշխատատեղի կազմակերպում՝ հաշվի առնելով աշխատանքի անվտանգության, արտադրական սանիտարիայի և արտահագուստի, ինֆեկցիոն և հակահրդեհային անվտանգության սահմանված

	<p>չափանիշները,</p> <ul style="list-style-type: none"> • ընթացիկ և առաջիկա աշխատանքի կատարման համար կարիքների գնահատում, • անհրաժեշտ սարքավորումների, գործիքների և նյութերի ընտրություն, համապատասխան աշխատանքային ռեժիմի կարգավորում:
<p>Կատարման չափանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> • Առկա է համապատասխան արտահագուստ, • աշխատանքի անվտանգության, ինֆեկցիոն և հակահրդեհային անվտանգության պահանջները ապահովված են, • անհրաժեշտ ատամնատեխնիկական գործիքները և նյութերը համապատասխան տեսակով և քանակով ընտրված են, • սարքավորումները բերված են աշխատանքային ռեժիմի:
<p><u>Խնդիրների բնագավառ 2. Անշարժ ատամնապրոթեզների պատրաստում և թերությունների շտկում</u></p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ul style="list-style-type: none"> • Ծայրատային գամիկների, գամիկային ներդիրների և գամիկների պատրաստում, • պլաստմասե և կերամիկական պսակների, կամրջաձև պրոթեզների պատրաստում և վերանորոգում, • շտամպված մետաղական պսակների և շտամպված-զոդված կամրջաձև պրոթեզների պատրաստում, • լրիվ ձուլածո պսակների, կամրջաձև պրոթեզների պատրաստում և շտկում, • պլաստմասե և կերամիկական երեսպատմամբ լրիվ ձուլածո պսակների, կամրջաձև պրոթեզների

	<p>պատրաստում և թերությունների շտկում,</p> <ul style="list-style-type: none"> • ցիրկոնային գամիկների և կերամիկական երեսպատմամբ ցիրկոնային պսակների, կամրջածև պրոթեզների պատրաստում:
<p>Կատարման չափանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> • Տրամադրված դրոշմին համապատասխան ծայրատային գամիկները և ներդիրները պատրաստված են, • տրամադրված դրոշմին համապատասխան պատրաստված են պլաստմասե և կերամիկական զանգվածներով պսակներ, կամրջածև պրոթեզներ, • ընտրված են համապատասխան չափի պարկուճներ և տրամադրված դրոշմին համապատասխան պատրաստված են շտամպված մետաղական պսակներ և կամրջածև պրոթեզներ՝ երկկողմանի հենակետերով և կոնսոլային, • տրամադրված դրոշմին համապատասխան պատրաստված են լրիվ ձուլածո պսակներ, կամրջածև պրոթեզներ, շտկված են բոլոր թերությունները, • տրամադրված դրոշմին համապատասխան պատրաստված են պլաստմասե և կերամիկական երեսպատմամբ լրիվ ձուլածո պսակներ և կամրջածև պրոթեզներ, շտկված են բոլոր թերությունները, • տրամադրված դրոշմին համապատասխան պատրաստված են ցիրկոնային գամիկներ և կերամիկական երեսպատմամբ ցիրկոնային պսակներ և կամրջածև պրոթեզներ:

Խնդիրների բնագավառ 3. Շարժական ատամնապրոթեզների պատրաստում և վերանորոգում

<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ul style="list-style-type: none"> • Մասնակի թիթեղային շարժական ատամնապրոթեզների պատրաստում ատամների մասնակի ադենտիայի դեպքում, • լրիվ շարժական ատամնապրոթեզների պատրաստում լրիվ ադենտիայի դեպքում, • շարժական թիթեղային ատամնապրոթեզների վերանորոգման իրականացում, • իմեդիատ ատամնապրոթեզների պատրաստում:
<p>Կատարման չափանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> • Մասնակի թիթեղային շարժական ատամնապրոթեզները պատրաստված են տրամադրված դրոշմին համապատասխան, շտկված են բոլոր թերությունները, օգտագործված են համապատասխան նյութերը, • օգտագործելով համապատասխան նյութերը, տրամադրված դրոշմին համապատասխան՝ պատրաստված են լրիվ շարժական ատամնապրոթեզներ, շտկված են բոլոր թերությունները, • վնասված շարժական թիթեղային ատամնապրոթեզները վերանորոգված են, • տրամադրված դրոշմին համապատասխան պատրաստված են իմեդիատ ատամնապրոթեզներ:

Խնդիրների բնագավառ 4. Կլամերների կամ ատաչմենթային ֆիքսացիայի համակարգով բյուգելային պրոթեզների պատրաստում, թերությունների շտկում, վերանորոգում

<p>Աշխատանքային</p>	<ul style="list-style-type: none"> • Պատրաստել ձուլածո բյուգելային պրոթեզներ
----------------------------	---

<p>գործընթացը</p>	<p>կլամերային համակարգի ֆիքսացիայով,</p> <ul style="list-style-type: none"> • ատաչմենթների կիրառում, • զուգահեռաչափում, • բյուգելային պրոթեզների մետաղական կարկասի ձուլում, թերությունների շտկում, • արհեստական ատամների ընտրություն և շարվածք:
<p>Կատարման չափանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> • Տրամադրված դրոշմին համապատասխան և օգտագործելով անհրաժեշտ նյութեր՝ պատրաստված է ձուլածո բյուգելային պրոթեզ կլամերային ֆիքսացիայով, և շտկված են բոլոր թերությունները, • տրամադրված դրոշմին համապատասխան և օգտագործելով անհրաժեշտ նյութեր՝ պատրաստված է ձուլածո բյուգելային պրոթեզ ատաչմենթային ֆիքսացիայով, և շտկված են բոլոր թերությունները, • կատարված է զուգահեռաչափում, պրոթեզի տեղադրման և դուրս բերման ուղիները որոշված են, պրոթեզի սահմանները ճիշտ ընտրված և ընդգծված են, • բյուգելային պրոթեզի մետաղական կարկասը ձուլված է, շտկված են բոլոր թերությունները, • արհեստական ատամների գույնը և որակը ընտրված է, կատարված է արհեստական ատամների շարվածք:
<p>Խնդիրների բնագավառ 5. Օրթոդոնտիկ ապարատների պատրաստում</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ul style="list-style-type: none"> • Օրթոդոնտիկ ապարատների հիմնական բաղադրիչների պատրաստում ,

	<ul style="list-style-type: none"> • ըստ դեֆեկտից ստացված դրոշմի՝ շարժական օրթոդոնտիկ ապարատների պատրաստում, • անշարժ օրթոդոնտիկ ապարատների պատրաստում՝ ըստ ստացված դրոշմի:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> • Օրթոդոնտիկ ապարատների հիմնական բաղադրիչները պատրաստված են համապատասխան նյութից: • շարժական օրթոդոնտիկ ապարատները պատրաստված են, • անշարժ օրթոդոնտիկ ապարատները պատրաստված են դրոշմին համապատասխան:
Խնդիրների բնագավառ 6. Դիմաձնոտային պրոթեզների պատրաստում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • Դիմաձնոտային դեֆեկտների դեպքում դիմաձնոտային պրոթեզների հիմնական տեսակների պատրաստում՝ ըստ տրամադրված դրոշմի, շտկում, • բուժական-կանխարգելիչ դիմաձնոտային պրոթեզների պատրաստում ըստ տրամադրված դրոշմի (շինաներ):
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> • Ըստ տրամադրված դրոշմի՝ դիմաձնոտային ապարատները պատրաստված են, անհրաժեշտ շտկումները կատարված են, • բուժական-կանխարգելիչ դիմաձնոտային ապարատները պատրաստված են, անհրաժեշտ շտկումները կատարված են:
Խնդիրների բնագավառ 7. Ձուլման գործ և գողման տեխնիկա	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • Նախապես պատրաստված հրակայուն մոդելի վրա ձուլման համակարգի ստեղծում, • ստեղծված ձուլման համակարգի հիմքի վրա

	<p>կաղապարի պատրաստում,</p> <ul style="list-style-type: none"> • ձուլածո դետալի պատրաստում, թերությունների շտկում , • մետաղական կոնստրուկցիաների էլեմենտների զոդում, համապատասխան զոդանյութերի կիրառում, թերությունների շտկում:
<p>Կատարման չափանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> • Նախապես պատրաստված հրակայուն մոդելի վրա ձուլման համակարգը ստեղծված է, • ստեղծված ձուլման համակարգի հիմքի վրա կաղապարը պատրաստված է, • օգտագործելով համապատասխան համաձուլվածքը՝ ձուլածո դետալը պատրաստված է, թերությունները շտկված են, • մետաղական կոնստրուկցիայի էլեմենտները զոդված են, թերությունները շտկված են:
<p>III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/</p>	<p>Ատամնատեխնիկը պատասխանատու է պատրաստած շարժական և անշարժ կոնստրուկցիաների որակի, հումքի և նյութերի ընտրության հարցում պատվիրատուին խորհրդատվություն տրամադրելու, նյութական միջոցները արդյունավետ օգտագործելու, աշխատանքը պատվերի պահանջներին և համաձայնեցված ժամկետին համապատասխան կատարելու համար:</p> <p>Ատամնատեխնիկը պահպանում է անվտանգության և սանիտարա-հիգիենիկ կանոնները ատամնատեխնիկական աշխատասենյակներում:</p>
<p>IV. Լեզուները</p>	<ul style="list-style-type: none"> • Հայերեն՝ լավ, • ռուսերեն՝ բավարար, • երկրորդ օտար լեզու՝ բավարար,

	<ul style="list-style-type: none"> • լատիներեն՝ անատոմիական, կլինիկական և ատամնատեխնիկական արտահայտություններ ու տերմիններ:
V. Համակարգիչը	<ul style="list-style-type: none"> • MS Word – բավարար • MS Excel - բավարար • Internet – լավ • Մասնագիտական ծրագրերի իմացություն
VI. Գիտելիքները	<p>Ատամնատեխնիկը պետք է իմանա.</p> <ul style="list-style-type: none"> • ատամնատեխնիկական նյութերը, դրանց հատկությունները, պահպանման և կիրառման ցուցումներն ու հակացուցումները, • ատամնատեխնիկական նյութերի որակի հսկման պետական համակարգը, ՀՀ-ում գրանցման կարգը, ատամնատեխնիկական գործունեության և ատամնատեխնիկական արտադրանքի լիցենզավորման կարգը, • շարժական և անշարժ կոնստրուկցիաների առանձնահատկությունները, նշագծման հիմունքները, մեթոդները, մշակման տեխնոլոգիան, կատարել անհրաժեշտ հաշվարկներ, • շահագործել շարժական և անշարժ կոնստրուկցիաների պատրաստման համար օգտագործվող մեքենասարքավորումները, իրականացնել պարզ նորոգումներ և տեխնիկական սպասարկում, • շարժական և անշարժ կոնստրուկցիաների պատրաստման տեխնոլոգիայում կիրառվող հիմնական տերմիններն ու հասկացությունները,

	<ul style="list-style-type: none"> • ատամնատեխնիկական նյութերի անհամատեղելիությունները, կողմնակի և թունավոր ազդեցությունները:
<p>VII. Կարողությունները և հմտությունները</p>	<p>Ատամնատեխնիկը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • ընդունել և գնահատել դրոշմը, • պահպանել նախազգուշական միջոցառումները ատամնատեխնիկական նյութերի հետ աշխատելու ժամանակ, • օգտվել կշռաչափային գործիքներից, սարքերից, • ընտրել շարժական և անշարժ կոնստրուկցիաների համար հումք ու նյութեր, մշակման ռեժիմները, սարքավորումները և գործիքները, • կատարել անհրաժեշտ հաշվարկներ շարժական և անշարժ կոնստրուկցիաների պատրաստման համար, • կազմակերպել արդյունավետ աշխատանք, • բացահայտել շարժական և անշարժ կոնստրուկցիաների խոտանը, • օգտվել տեղեկատու գրականությունից:
<p>VIII. Անձի որակական հատկանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> • Դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ, • տիրապետել աշխատանքի մշակույթին և էթիկային, արդյունավետ աշխատել թիմում, • դրսևորել քննդատական մտածողություն, • կառավարել սթրեսը և ժամանակը, առաջացած պրոբլեմներին և կոնֆլիկտներին տալ համապատասխան լուծումներ, • կարողանալ նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսությունները և

	<p>քննարկումները,</p> <ul style="list-style-type: none">• լինել հաղորդակցվող, թիմային աշխատանքի պատրաստ, նորին ձգտող, ստեղծագործական մտածելակերպ ունեցող, համբերատար, պարտաճանաչ:
--	---